<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային երգ ու պար, նրանց դերը երեխայի կրթական գործընթացում

Երաժիշտ-դաստիարակ՝ Ռուզաննա Համբարձումյան

Մանկապարտեզ՝ <<Արփիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Ազգային երգ ու պար……5

1.1 Ազգային երգի ուսուցման կարևությունը նախակրթարանում……5

1.2 Ազգային պարի ուսուցման կարևությունը նախակրթարանում……7

Գլուխ 2 . Հետազոտության ընթացքը……8

2,1 Ծանոթացում ազգային մշակույթի հետ……9

2.2 Երգել մաքուր և զգացմունքային……10

2.3 Պարել համախմբված……10

2.4 Երաժշտական գործիքների տարբերակում……12

Եզրակացություն……16

Գրականության ցանկ……18

Ներածություն

Մարդկության ստեղծումից ի վեր մարդը ապրել է խմբերով-ցեղերով- տոհմերով… Ի վերջո ձևավորված ազգատեսակներով: Ազգի պահպանման կարևորագույն գործոններն են՝ լեզուն, կրոնը , տարազը, կենցաղային սովորույթները, մշակույթը, երաժշտությունը: Դրանց շնորհիվ է պահպանվում ազգային դիմագիծը, որը դարեր շարունակ հղկվում, ավելացվում ու փոխանցվում է սերնդեսերունդ: Այս հարցում շատ պատասխանատու ներդրում ունեն նաև մանկավարժները:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում կարևորագույն դեր ունի գեղագիտական, մասնավորապես՝ երաժշտական դաստիարակությունը, ինչն այս տարիքում նպատակահարմար է իրականացնել ազգային երաժշտության միջոցով:

Նախակրթարանում ազգային երգ ու պարի ներառումը հայրենասիրության, էթնիկ պատկանելության, ազգային գաղափարախոսության զարգացման կարևորագույն գործընթացներից մեկն է:

Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է ազգային արժեքները ընդգծելուն, մեր մեծերի ժառանգությանը տեր լինելուն և արժանի կրողները դառնալուն, ազգային երաժշտության նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, երեխաների երաժշտական գիտելիքները հարստացնելուն՝ ծանոթացնելով տարբեր երաժշտական ստեղծագործությունների հետ:

<u>Հետազոտության նպատակը</u>

Ժողովրդական երգն ու պարը հասու դարձնել երեխաներին, ընդունելի ու հասկանալի դարձնել նրա շարժումներն ու ելևեջները:

<u>Հետազոտության վարկածը</u>

Կրթական գործընթացում, զուգակցելով մանկականը ազգայինի հետ , սերտ կապ ստեղծել երեխայի ազգային դաստիարակության, ճաշակի զարգացման, ինչու չէ, նաև ազգային արժեքների գնահատման գործում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է երկու գլխից:

Առաջին գլխում ներկայացված է տեսական մասը. լսում ենք հայկական երաժշտություն՝ Արամ Խաչատրյան, երգում է Կոմիտասը: ներկայացնում ենք հայկական երաժշտության առանձնահատկությունները:

Նայում ենք տեսագրություն (պարում են յարխուշտա, քոչարի, մախմուր աղջիկ): Ընդգծում ենք հնչող կոնտրաստները՝ խրոխտ ու սեգ լեռների և ծաղկազարդ ու նուրբ սիզագորգով հովիտների ներկայացումը հայկական պարում:

Երկրորդ գլուխը իր մեջ ներառում է հայկական երգի ու պարի ուսուցման գործնական մասը:

Սույն աշխատանքը կատարելիս օգտվել եմ Շ.Շ.Մկրտչյանի <<Երաժշտությունը մանկապարտեզում>> ուսումնամեթոդական ձեռնարկարկից, թեմայի մասին նյութեր պարունակող տարբեր ինտերնետային կայքերից,ներառելով նաև մեծերի խոսքերը ուղված աղգային երգ ու պարին: Գործնական մասը հիմնված է իմ աշխատանքային փորձի և տեսական գիտելիքների վրա:

Գլուխ 1.

Ազգային երգ ու պար

1.1 Ազգային երգի ուսուցման կարևությունը նախակրթարանում

<<Ուսուցիչ պարոններ և քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է, սխալ ուղղությամբ ազգ մը կը խորտակեք վերջը: Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժումն է, և պարն էլ, ինքնին շարժումն ըլլալով, երգը կզուգորդի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կըրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողությամբ ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը:>>,- Կոմիտաս [1]

Մարդը, որպես անհատ ձևավորվում է մանկահասակ տարիքից սկսած: Մանկավարժության պատմության մեջ առաջին անգամ Ֆ. Ֆրյոբելը կառուցեց կրթական ծրագիր, որը հիմնված է մտավոր զարգացման գաղափարի վրա: Նա մշակեց նախագիծ կրթությունը պլանավորելու համար, որի առաջին փուլը նշանակվեց մանկապարտեզը՝ 3-7 տարեկան երեխաների զարգացման և խնամքի հաստատությունը: Ֆրյոբելի համար հիմնական նպատակը երեխայի տարիքին համապատասխան դաստիարակությունն էր, զարգացումը: Նա անհատի զարգացման համար առանձնացնում է չորս բաղադրիչ՝ որոնցից առաջինը զգացմունքներն են: [2]

---

1. https://hanragitak.com/%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AB-%D5%B4%D5%BF%D6%84%D5%A5%D6%80%D5%AB%D6%81/ 06.12.2023թ, ժամը 23:35
2. https://animanukyann.wordpress.com/2019/01/25/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%A8%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%BB/

Այսօր մեր առջև մեծ խնդիր է ծառացել պահպանել մեր նախնիների ստեղծած և մեզ փոխանցած հզոր ժառանգությունը, որը ցանկանում են խլել ու տիրել վայրի ու նորելուկ ցեղախմբերը: Ժառանգություն, որ պահպանում և ներկայացնում է ազգը: Երգն ու պարը կազմում է ազգային մշակույթի մի մասը: Նշենք, որ երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է:

Հայ էթնոսի սոցիալ-մշակութային կենցաղի ատրիբուտային բաղադրիչների հետ մեկտեղ հայկական ժողովրդական երաժշտությունը ազգային ինքնագիտակցության հիմքն է կազմում: Այն, լինելով հին ու ինքնատիպ հարուստ մեղեդայնություն , իր ազդեցությունն է ունեցել համաշխարհային երաժշտական մշակույթի զարգացման վրա: Հայկական երաժշտությունն իր մեջ ներառում է համաշխարհային մեծ ճանաչում ունեցող սիմֆոնիաներ, օպերաներ, բալետներ, ռոմանսներ, ընդհուպ մինչև կոլորիտային գյուղական երգեր: Համաշխարհային համբավ ունեցող կոմպոզիտորների կողքին մենք ունենք բանաստեղծ, շարականների հեղինակ, երաժշտության ուսուցիչ, բանահավաք Կոմիտաս, որին սկզբում անվանել են <<թափառական փոքրիկ երգիչ>> : Հայ առաջին մեծ խմբավարը, որը հավաքագրեց ու մեզ փոխանցեց ժողովրդի առօրեան, լավ ու վատ պահերը ներկայացնող երգեր:

<<Մաշտոցը փրկեց հային, Կոմիտասը՝ հայի հոգին>>,- այսպես է ներկայացրել գուսանա-աշուղական երգարվեստի խնկարկու Հայկ Մխոյանը: [1]

Հայ մշակը երգում է հողը հերկելուց, ցորեն ցանելուց՝ իր խնդիրները կիսելով լուռ աշխատող եզների հետ: Հայ կինը լավաշ է թխում ու դարդը պատմում վառվող կրակին: Հարսներն իրենց բալիկներին օրոր են երգում՝ տեղյակ պահելով իրենց ազգի անկոտրում ու հպարտ տեսակի մասին:

1. https://hhpress.am/culture/2022/12499/ 07.12.2023թ, ժամը 22:20

1.2 Ազգային պարի ուսուցման կարևությունը նախակրթարանում

Հայն իր միտքը, հույզերն ու զգացումներն արտահայտելու մեկ այլ տարբերակ էլ ունի՝ պարը: Պարն ավելին է, քան համակցված շարժումները, պարն ավելին է , քան երաժշտության արտացոլումը: Հայն իր պարով ողջույն է հղում, հայն իր պարով հույզերն է արտահայտում, արժանի հյուրընկալություն է մատուցում պատվո հյուրերին, շնորհակալություն է հայտնում արժանավորին, փառաբանում է երկնավորին: Հայն իր պարով հաղթում է թշնամուն: Կռվից առաջ <<Ռազմակոչ>> է պարում , <<Յարխուշտա >> է պարում ու <<Քոչարի>>, որ զինվորն իր ոտքի զարկով անգամ ազդարարի՝ <<Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում>>:





Աղջիկների նազանի պարը հայի մտքի նուրբ ու ստեղծագործ արտահայտությունն է: Գեղեցիկ ու յուրօրինակ շարժումներն արտացոլվում են նաև ժանյակե ասեղնագործություն դարձած քարերով. Քարեր, որոնք պատմում են դարերից եկած հայի պատմությունը:

Հայն իր պարով ներկայացնում է նուրբ ու փխրուն կնոջը՝ քաջարի ու հայրենասեր ամուսնուն նեցուկ դարձած, թշնամուն հաղթելու հավատքով լցված:

<<Իմ մանկության երաժշտական տպավորություններն են ժողովրդական երաժշտությունը, որը հնչում էր չորսբոլորս Թբիլիսիում, ժողովրդական երգերը, որոնք լսում էին ընտանեկան հանդեսների երեկոներին, ժողովրդական նվագարանները, որոնք տարբեր ժամանակ հնչում էին այս ու այնտեղ տարբեր առիթներով>>,- Արամ Խաչատրյան[1]

Գլուխ 2

Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքն ընթանում է ավագ խմբում. Կիրառում ենք խ.ի.կ. մոդելը: Պարապմունքը վարում ենք խմբի դաստիարակի հետ միասին:

- Ուսննկնդրել Կոմիտասի <<Հով արեք սարեր>> երգը, Ա. Խաչատրյանի <<Սուսերով պարից>> հատված:
- Սովորել Կոմիտասի << Հեյ իմ նազան>> երգը
- Կրկնել Ն. Սահակյանի << Մենք ուզում ենք խաղաություն>> երգը
- Պարել << Քոչարի>>:
- Խաղալ << Ճանաչիր նվագարանը>>:

Խնդիրներ

- Ազգային երաժշտության նկատմամբ գիտակցության արթնացում:
- Երգել զգացմունքային:
- Զարգացնել գեղեցիկ ու համաչափ շարժումներ կատարելու ունակություն:
- Արագ կողմնորոշվել տարածության մեջ:

Դահլիճում տիրում է ազգային թեման՝ հայկական տարազով տիկնիկ,ազգանախշով գործվածք, երաժշտական գործիքներ, կահ-կարասի: Երեխաները մտնում են դահլիճ:

1. https://armlur.am/156949/ 08.12.2023թ, ժամը 22:55

Կատարում են երաժշտաշարժական վարժություններ՝ քայլք, կերպարային քայլք, ցատկ, քայլքով նստում են աթոռակներին:

2.1. Ծանոթացում ազգային մշակույթի հետ

Դաստիարակը հարցնում է.

1. *–Երեխանե՛ր, ո՞վ կասի հայ կոմպոզիտորների անուններ:*
2. *–Ի՞նչ հայկական երգեր, պարեր գիտեք:*
3. *–Ո՞վ է Կոմիտասը:*
4. *–Ի՞նչ է բալետը:*

Հերթով ընդունում ենք պատասխանները, ապա բոլորը միասին սկսում են վերլուծել իրենց իսկ տված պատասխանները, հասկանում ում և ինչի մասին են խոսում: Պասիվ երեխաները ներքաշվում են << խառնաշփոթի>> մեջ:

Ներկայացվում են Կոմիտասի , Ա. Խաչատրյանի դիմանկարները: Դաստիարակը հակիրճ տեղեկություն է ներկայացնում նրանց մասին:



Լսում ենք հատված <<Գայանե>> բալետից, այն է՝ <<Սուսերով պար>>՝ հպարտ ու աներեր հնչողությամբ, ինչպես ինքը՝ Ա. Խաչատրյանն է ասել՝<<մարտական տրամադրությամբ>> : Երաժշտության ավարտին քննարկում ենք բոլորս միասին, թե ինչ տպավորություն ստացանք և ինչ կարելի է անել այս երաժշտության ներքո:

Հետո լսում ենք Կոմիտասի <<Հով արեք սարեր>> երգը: Երգի ավարտից հետո նորից քննարկում տպավորությունները, նշում ենք տրամադրության փոփոխությունները՝ մեղմ, հանգիստ հնչողությունը:

Արձանագրում ենք, որ հայը խրոխտ ու հաղթական , ուրախ ու մանկական անհոգ երգերի հետ միասին ունի հոգևոր ու ազգային կոլորիտ ներկայացնող երգեր: Փաստում ենք, որ Կոմիտասը ոչ միայն երգիչ, երգահան էր, այլև մանկավարժ: << Եթե մանուկը չի հասկանար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկանալ անոր հոգին: Պետք է վար իջնել մինչև անոր աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:>>,- Կոմիտաս:[1]

2.2.Երգել մաքուր և զգացմունքային

Բոլորս տեղափոխվում ենք դաշնամուրի դիմաց կիսաշրջանով և սկսում ենք երգել Կոմիտասի <<Հեյ, իմ նազան>> երգը: Երգը կատարում ենք թեթև երգեցողությամբ ու կատակային տրամադրությամբ: Հետո կրկնում ենք Ն. Սահակյանի << մենք ուզում ենք խաղաղություն>> երգը:

2.3. Պարել համախմբված

Նախապես հրավիրված պարուհին ներկայացնում է <<Մախմուր աղջիկ>> պարը: Ծափերով ողջունում ու շնորհակալություն ենք հայտնում գեղեցիկ պարի համար, ապա բոլորս միասին որոշում ենք պարի տեսակը, բնույթը: Հետո ցանկացողները փորձում են

1. https://hanragitak.com/ 08.12.2023թ, ժամը 23:15

պարել հյուրի հետ: Իսկ տղաների համար հնչում է <<Քոչարի>>: Շրջան ենք կազմում, որքանով ստացվում է պարում ենք: Աստիճանաբար շրջանը համալրվում է աղջիկներով: Վերջում ստանում ենք ամրոց՝ կազմված տղաներից ու աղջիկներից, որոնցից յուրաքանչյուրն աշխատում է ճիշտ և հավասար պարել, գիտակցելով միասնության գաղափարը, ձեռքերն ամուր բռնած, գլուխը՝ վեր: Ակամայից ստացված ամրոցը անառիկ է թվում ու հուզմունք է առաջացնում դիտորդների մոտ:

Ազգային երաժշտությունը մատուցվում է ազգային գործիքներով՝ դուդուկ, զուռնա, դհոլ:

Աշխարհում հայտնի դուդուկն ունի նաև երկրորդ անուն՝ ծիրանափող.

- Ինչու՞ Երեխաներ:

- Այն պատրաստվում է ծիրանենուց:

Ֆ. Ֆրյոբելը դաստիարակության նպատակը համարել է երեխաների բնական հատկությունների զարգացումը, նրա ինքնաբացահայտումը: Ֆ. Ֆրյոբելը խաղը համարել է մանկապարտեզի մանկավարժական առանցքը: Նա ապացուցել է, որ <<երեխայի համար խաղը մղում է բնազդ, որը հիմնված է նրա հիմնական գործունեության վրա: Խաղը տարր է, որում նա ապրում է>>:

<<Ամեն լավ բանի հիմքն ընկած է խաղի մեջ և բխում է դրանից: Ինքը՝ խաղը, դատարկ զվարճանք չէ, այն ունի բարձր և խորը իմաստ:>>,- Ֆ. Ֆրյոբել [1]

1. https://animanukyann.wordpress.com/2019/01/25/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%BB/ 09.12.2023թ, ժամը 21:50

2.4. Երաժշտական գործիքների տարբերակում

Սեղանին դրված են քարտեր երաժշտական գործիքների պատկերներով(փողային, լարային. հարվածային): Սկզբում ներկայացնում ենք դրանց տեսակները, տարբերությունները, հետո լսում ենք հնչողությունը: Երկրորդ փուլում երեխաները բաժանվում են խմբերի: Հերթով հնչում են տարբեր գործիքներ: Երեխաները ընտրում են համապատասխան քարտը, նշում անունը և որոշում, թե որ խմբին է պատկանում: Վերջում նշում ենք, թե որ գործիքով ինչպիսի տրամադրություն կարելի է ապահովել:

Խաղային գործունեության ընթացքում ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ, անկաշկանդ, հուզական, բնական) հասակակիցների միջավայրում ինքնահաստատվելու համար: Խաղը ստեղծագործական գործունեություն է , որը նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի առանձնահատկությունների բացահայտմանը, ընդունակությունների զարգացմանը:

Խաղի ժամանակ երեխաները ավելի ակտիվ են մասնակցում: Դափը, թմբուկը, շեփորը, դուդուկը, ջութակը, կիթառը ծանոթ են երեխաներին:: Կարողանում են հեշտությամբ տարբերակել, թե որը որ խմբին է պատկանում: Առիթը բաց չեն թողնում դրանցով <<նվագելու>> (դափ, թմբուկ, շեփոր):

Պարապմունքի պլան

	նպատակ	*վերջնարդյունք*	*Ստեղծագործության ցանկ*	*Երաժշտադիդակտիկ Պարագաներ*
Երաժշտաշարժական վարժություններ	*Երաժշտառիթմական զգացողության զարգացում*	*Հստակ կատարել երաժշտառիթմիկ շարժումներ*	*Ցատկապարան Ա.Խաչատրյան*	*Նվագարկիչ հեռուստացույց*
Ոնկնդրում	*Երաժշտագեղագի*	*Հասկանալ և*	*<<Հով արեք*	*Դիմանկարներ*

	տական գիտակցության արթնացում ազգային երաժշտության նկատմամբ	*կարողանալ արտահայտել լսածն ու զգացածը*	*սարեր>> Կոմիտաս <<Սուսերով պար>> Ա. Խաչատրյան*	*Կոմիտաս, Ա. Խաչատրյան*
Ձայնավարժություն, երգեցողություն	*Մաքուր և անկաշկանդ երգեցողություն երաժշտազգայական ընկալում*	*Ցուցաբերել հետաքրքրություն և զգացմունքայնություն երգի ընթացքում*	*<<Հեյ իմ Նազան>> Կոմիտաս*	*Երգի բնույթին համապատասխան նկարներ ընթացքում ցուցադրելու համար*
Պար	*Սովորեցնել տարբերել պարերն ըստ բնույթի*	*Կատարել պարզ պարային շարժումներ*	*<<Քոչարի>> ժողովրդական*	*<<Մախմուր աղջիկ>> պարի տեսաերիզ*
Խաղ	*Ձևավորել խաղերին արձագանքելու կարողություն*	*Տարբերել նվագարանների տեսակները՝ փողային, լարային, հարվածային*	*Ճանաչիր նվագարանը*	*Քարտեր նվագարանների նկարներով,*

Ապահովվեց աշխույժ և ուրախ մթնոլորտ: Երեխաները շատ ոգևորված մասնակցեցին երգին, պարին ու խաղին:

Հետազոտվող թեման իր մեջ ներառում է ազգային մշակույթի յուրացումը, նրա մաքուր փոխանցումը երեխաներին, որի հիման վրա է կառուցվում հայեցի մտածելակերպը և նրա արժևորումը համաշխարհային մշակույթի շրջանակներում:

Երաժշտությունը կյանքի է կոչում դեռևս չգիտակցված ընկալումներ և զգացումներ, մաքրում բոլոր տեսակի մանրուքներից, ամրապնդում մարդու արժանապատվությունը, հավատը իր իսկ նկատմամբ: Երաժշտության ներգործությունը փոքրիկների վրա նրանց մղում է դեպի բարին, դրականը, կատարյալը: Երբեմն երաժշտության ազդեցությունը լինում է ավելի ուժեղ, քան բազմաթիվ խրատներ:

Դաստիարակը երեխաների հետ նստում է շջանով: Հարցերի միջոցով ամփոփում է պարապմունքը.

1. *Ի՞նչը ձեզ դուր եկավ:*
2. *Ո՞վ է Կոմիտասը:*
3. *Սկզբում ինչպե՞ս էին նրան անվանում:*

Յուրաքանչյուրն իր տպավորությունն է ներկայացնում. Մեկին <<Մախմուր աղջիկ>> պարն է գերել, մյուսին՝ միասնական <<քոչարին>>: Հաջորդը ներկայացնում է տպավորությունը <<Սուսերով պարից>>, իսկ մյուսը հիացած է Կոմիտասի երգով: Արդյունքում հասկանում ենք , որ երգերը լինում են տարբեր բնույթի, պարերը լինում են տարբեր ոճի: Բայց կարևորում ենք ազգայինը, դասականը: Դաստիարակը գովում է բոլորին և շնորհակալություն հայտնում ակտիվ մանակցության համար:

Պարապմունքի ընթացքին հետևում են տնօրենը, ֆիզ. դաստիարակը, կրտսեր երկրորդ խմբի դաստիարակը: Դիտարկումը կատարում է տնօրենը՝ Ա. Հարությունյանը:

Տնօրեն.

1. *-Դաստիարակը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին: Երեխաները մեծ ոգևորությամբ ու հետաքրքրությամբ էին մասնակցում պարապմունքին: Նրանց հուզեց և ոգևորեց Կոմիտասի կատարումը, սուսերով պարի մարտական ոգին: Ցանկություն հայտնեցին անգամ բալետ պարել:*
2. *-Երաժշտական պարապմունքն անցավ ազատ ու անկաշկանդ արտահայտվելու, երգ ու պարի մթնոլորտում:*

3. *-Այս թեման շատ արդիական է: Բազմաոճ և անճաշակ մատուցումների մեջ երեխային պետք է ներկայացնել և ուղղորդել ազգային մաքուր երաժշտություն լսելուն, գեղարվեստական ճաշակ զարգացնելուն:*

Հետազոտվող թեման նպատակ ունի սեր ու հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ ազգային երաժշտության հանդեպ, որի հիման վրա է կառուցվում հայեցի մտածելակերպը, դաստիարակությունը և նրա արժևորումը համաշխարհային մշակույթի շրջանակներում:

Ըստ Վիգոտսկու՝ երեխաները հեռու են պասիվ ընդունող լինելուց, բայց իրենց գիտելիքներն ու սեփական օրինաչափությունները կառուցում են իրենց տրամադրող տեղեկատվությունից և հավաքական գիտակցությունից ու զգայունությունից: [1]

1. https://hy.healthy-food-near-me.com/vygotsky-all-you-need-to-know-about-social-development-theory/ 12.12.2023թ., ժամը 21:45

Եզրակացություն

Այսպիսով,ամփոփելով << Ազգային երգ ու պար, նրանց դերը երեխայի կրթական գործընթացում >> հետազոտական աշխատանքը, գալիս ենք այն եզրահանգման, որ երեխային պետք է ծանոթացնել և ուսուցանել ազգային մշակույթը սկսած մանկապարտեզից: Արթնացնելով ազգային գիտակցությունը երեխայի մոտ՝ նա կձգտի դեպի իր ակունքները, որն էլ շատ կարևոր է այս կյանքում անհատի ձևավորման համար իր ճիշտ տեղը գտնելու հարցում: Բնականաբար երեխան չի կարող հասնել ցանկալի արդյունքի միայնակ, նրան կօգնեն ծնողները, միջավայրը, մանկավարժները: Երեխայի մոտ կձևավորվի խմբային աշխատանք: Խմբային աշխատանքը օգնում է ավելի արագ յուրացնել նյութը, ավելի տեղեկացված լինել, մտքերի փոխանակում անել:

Այս աշխատանքն իրականացնելիս ես բացահայտեցի, որ մեր հայ ընտանիքներում ազգայինը թեև մղվել է երկրոդ պլան, միևնույն է այն գենետիկորեն ապրում է երեխաների ենթագիտակցության մեջ: Բավական է մի երգ, մի պար, ազգային կոլորիտ, և նրանց հոգում բոցավառվում է թաքնված փոքրիկ կրակը: Անմիջապես արձագանքը լինում է. <<Ես այդ երգը լսել եմ:>>, <<Իմ մայրիկը այդ երգը երգում է:>>, <<Մենք հարսանիքի ժամանակ այդ պարը պարել ենք:>>

Իմ կարծիքով ես կարողացա հետաքրքրություն առաջացնել երեխաների շրջանում մեր ազգային մշակույթի նկատմամբ: Նրանք որոշում էին դհոլ նվագել, փայտիկները վերցրած՝ սուսերով պար պարել: Զարմացած հարցեր էին տալիս հոգևորական երաժիշտ Կոմիտասի մասին:

Այսուհետ ես կառաջնորդվեմ Յան Ամոս Կոմենսկու խոսքերով.

<<Մի հետամտիր գովեստին, բայց ողջ ուժով ձգտիր գովելի գործել>>:

<<Առանց օրինակի ոչինչ չես սովորի>>: [1]

1.https://sonavardanyan6.wordpress.com/2014/09/07/%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A8-%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B4%D5%B8%D5%BD-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%A5%D5%B6/ 12.12.2023թ, ժամը 00:20

Այս աշխատանքն ինձ համար օրինակ և ուղեցույց կհանդիսանա իմ հետագա աշխատանքային գործունեության համար:

Ես նպատակ ունեմ իմ առաջ խնդիր դնելու և իմ գործընկերներին ևս հորդորելու նույնն անել՝ ազգայինը դարձնել առաջնային: Ցանկացած պարապմունք հնարավորինս կառուցել ազգային մոտիվներով, արթնացնել և ամրապնդել հայ լինելու գաղափարը:

Գրականության ցանկ

1. Շ.Շ.Մկրտչյան, Երաժշտությունը մանկապարտեզում ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2007թ. էջ 4,5
2. https://hanragitak.com/
3. https://hhpress.am/culture/2022/12499/
4. https://hanragitak.com/%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AB-%D5%B4%D5%BF%D6%84%D5%A5%D6%80%D5%AB%D6%81/
5. https://armlur.am/156949/
6. https://animanukyann.wordpress.com/2019/01/25/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%BB/
7. https://sonavardanyan6.wordpress.com/2014/09/07/%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A8-%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B4%D5%B8%D5%BD-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%A5%D5%B6/
8. https://hy.healthy-food-near-me.com/vygotsky-all-you-need-to-know-about-social-development-theory/